

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՏԴ 629.113

Ս.Ս. ՉԻՐՈՒԽՉՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտի դերը երկրի տնտեսության զարգացման, անվտանգ և հուսալի տրանսպորտային ծառայությունների մատուցման գործընթացում, շահագործման անվտանգության առկա հիմնխնդիրները և լուծման ուղիները:

Առանցքային բաներ. տրանսպորտային համակարգ, տնտեսություն, ավտոմոբիլային տրանսպորտ, անվտանգ և հուսալի շահագործում:

Հայաստանի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքներից մեկի՝ արդյունավետ և անխափան գործունեությունը կարևորագույն և անհրաժեշտ պայման է տնտեսության կայուն զարգացման և կառուցվածքային բարեփոխման, երկրի ազգային անվտանգության ու պաշտպանության, ժողովրդի կենսապայմանների բարելավման համար:

Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման է տրանսպորտի ոլորտի կայուն զարգացումը, հնարավորությունների գնահատումն ու շարունակական կատարելագործումը: Արդյունավետ, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների ու ծառայությունների ստեղծումը անմիջականորեն նպաստում է ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը, փոխադրումների արդյունավետության բարձրացմանը, միջպետական համագործակցության խթանմանը, հայրենական արտադրատեսակների համար նոր սպառման շուկաների ապահովմանը, զբոսաշրջության զարգացմանը:

Վերջին տարիներին տրանսպորտային ծառայությունների կառուցվածքը մի շարք օբյեկտիվ պատճառներով զգալիորեն փոխվել է՝ ի նպաստ ավտոմոբիլային տրանսպորտի: Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտի առաջնայնության մասին կարելի է դատել հետևյալ վիճակագրական տվյալներով, որոնք առավել կարևորում են ավտոմոբիլային տրանսպորտի դերը ՀՀ -ում:

Բեռնափոխադրումների կառուցվածքը՝ ըստ տրանսպորտի տեսակների, տոկոսներով կազմում է՝ երկաթուղային՝ 9,9; ավտոմոբիլային՝ 84,0; օդային՝ 0,1; մայրուղային խողովակաշարային՝ 6,0, իսկ ուղևորափոխադրումների կառուց-

վածքն ըստ տրանսպորտի տեսակների՝ երկաթուղային՝ 0,2; ավտոմոբիլային՝ 85,3; օդային՝ 1,5; էլեկտրատրանսպորտ՝ 13,0 [1]:

Հարկ է նշել, որ Արևմտյան Եվրոպայում բեռնաշրջանառության 25 % բաժին է ընկնում երկաթուղային տրանսպորտին, 40 %-ը՝ ավտոմոբիլային տրանսպորտին, 35 %-ը ներքին ջրային, ծովային (մոտակա) և խողովակաշարային տրանսպորտին:

Ինչպես երևում է ներկայացված վիճակագրական տվյալներից, ավտոմոբիլային տրանսպորտն ունի կարևոր ռազմավարական նշանակություն մեր երկրի տնտեսության համար: Այս առումով կարևորվում են ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի զարգացման բարձր տեմպերը, որի համար անհրաժեշտ է խթանել տրանսպորտային միջոցների շարժակազմի արդիականացումը, բարձրացնել դրանց շահագործման անվտանգությունն ու հուսալիությունը, վերահսկողության մակարդակը, միջազգային համագործակցության շարունակական զարգացումը և զարգացնել տարանցիկ փոխադրումները [2]:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է փաստել, որ ավտոմոբիլային տրանսպորտի զարգացումը և գործունեության արդյունավետության բարձրացումը դիտվում են որպես տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման, սոցիալական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացման և արդյունավետության ավելացման, աշխատուժի շարժունակության մակարդակի բարձրացման, ինչպես նաև տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման նախապայման:

Ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում իրականացվող ռազմավարության հիմնական նպատակը պետք է լինի անվտանգ, արդյունավետ, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող ավտոտրանսպորտային ենթակառուցվածքների ու ծառայությունների ստեղծումը և միջպետական համագործակցության ու ապրանքաշրջանառության խթանումը:

Ոլորտում առկա են մարտահրավերներ, որոնց ռազմավարական լուծումը կարևորագույն նախապայման է ավտոտրանսպորտային հուսալի և անվտանգ ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացման և տրանսպորտային ծախսերի կրճատման համար:

Մասնավորապես՝ ավտոտրանսպորտային միջոցների կտրուկ աճով պայմանավորված, համաձայն ՊԵԿ տվյալների միայն 2019 թ. Հայաստան է ներմուծվել ավելի քան 180000 ավտոմեքենա, որն արդեն իսկ առկա մեքենաների հետ միասին կազմում է ավելի քան 620 հազար: Սա խիստ մտահոգիչ է, հաշվի առնելով նաև այն, որ դրանց մեծ մասի շահագործման ժամկետը գերազանցում է 10 տարին: Մյուս կողմից՝ հիմնախնդիրներ են նաև ավտոտրանսպորտային

միջոցների տեխնիկական զննության, սպասարկման և նորոգման համակարգի ցածր արդյունավետությունը, նոր, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և սպասարկող ինժեներատեխնիկական կազմի որակավորման բարձրացման մոտիվացիայի բացակայությունը, մեքենաների պահպանման և անվտանգ շահագործման ապահովումը, վարման ցածր մակարդակը և երթևեկության խիստ ծանրաբեռնվածությունը, հատկապես պիկ ժամերին մայրաքաղաքի կենտրոնի բանուկ փողոցներում և բնակելի զանգվածներում:

Շատ մտահոգիչ են հատկապես ՃՏՊ –երի արդյունքում զոհված և վիրավորված անչափահասների վիճակագրական տվյալները ՀՀ -ում, օրինակ՝

- 2017թ. առաջին կիսամյակ՝ 185 ՃՏՊ- 2 զոհ- 218 վիրավոր,
- 2018թ. առաջին կիսամյակ՝ 196 ՃՏՊ- 11 զոհ- 229 վիրավոր,
- 2019թ. առաջին կիսամյակ՝ 231 ՃՏՊ- 6 զոհ- 267 վիրավոր:

ՃՏՊ-երի թիվը 2019 թ. առաջին կիսամյակում 2018 թ համեմատ աճել է 212-ով, աճել է նաև ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով զոհերի, տուժածների թիվը:

Հարկ է նշել, որ համաձայն Russian Automotive Market Research –ի տվյալների՝ ավտոմոբիլացման մակարդակը ՌԴ –ում կազմում է 1000 բնակչին – 353 ավտոմոբիլ, Բելառուսի ցուցանիշը կազմում է 380, Ղազախստանինը՝ 209, Ղրղզստանինը՝ 156, իսկ Հայաստանինը՝ 195: Վերջինս շատ բարձր ցուցանիշ է՝ հաշվի առնելով, որ ավտոտրանսպորտային միջոցների 60 % -ից ավելին շահագործվում է մայրաքաղաքում՝ իր սահմանափակ ենթակառուցվածքներով: Եթե սրան ավելացնենք նաև կոշտ ծածկույթով ավտոմոբիլային ճանապարհների սահմանափակ լինելը (աղյուսակ), ապա խնդիրը դառնում է առավել անհանգստացնող:

Առկա խնդիրների առաջարկվող լուծումները: Անհրաժեշտ է իրականացնել ավտոտրանսպորտի բնագավառի շուկայի համալիր վերլուծություն և մշակել բնագավառի բարեփոխումների երկարատև ռազմավարության գործողությունների ծրագիր, ելնելով տնտեսության զարգացման ռազմավարության գերակա ուղղություններից: Տրանսպորտի բնագավառում առկա խնդիրները կարգավորելու համար անհրաժեշտ է զարգացնել ենթակառուցվածքները, ձևավորել կառավարման արդյունավետ համակարգ և տրանսպորտային ծառայությունների մատուցումը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին:

Կոշտ ծածակոյթով ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը

Երկիր, տարի	Բոլոր ճանապարհները, հազ. կմ	Դրանցից կոշտ ծածակոյթով		Ավտոմոբիլային ճանապարհների խտությունը, 1000 կմ ² տարածքին բաժին ընկնող ճանապարհի երկարությունը, կմ
		հազ. կմ	% - ով ընդհանուրից	
Ռուսաստան, 2017	1507,8	1063,9	70,6	88
Բելառուս, 2017	102,4	88,6 /	86,5	493,2
Հայաստան, 2017	7,6	6,0	78,6	254,2
Ղազախստան, 2017	95,4	81,8	85,8	35,0
Չինաստան, 2016	4696	...	63,7	489,2
Ֆրանսիա, 2016	1103	...	100	2001
Իսրայել, 2008	18,1	18,1	100	817,2
Ավստրիա 2014	126,8	...	100	1513
Մեծ Բրիտանիա 2016	422,3	...	100	1739
Իռլանդիա, 2016	98,9	...	100	1321
Դանիա, 2016	74,6	...	100	1730
Սլովակիա, 2016	46,0	...	100	938,4
Շվեյցարիա, 2012	73,0	...	100	1768

* Աղբյուր: <https://www.eg-online.ru/article/401621>

Ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ և հուսալի շահագործման ապահովումն ամնիջականորեն պայմանավորված է հետևյալ հրատապ խնդիրների լուծումով.

- ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ պահպանման կազմակերպում.
- տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումների և նորոգումների ժամանակին, լիարժեք և ամբողջական ծավալով կազմակերպում և իրականացում,
- տրանսպորտային միջոցների տեխնիկական և վարողի առողջական վիճակի նախաերթային զննման կազմակերպում,
- ավտոտրանսպորտային միջոցների համար երաշխավորված նվազ վտանգավոր վառելիքաքսուքային նյութերի կիրառման ապահովում,
- ավտոտրանսպորտային միջոցների նորոգման համար երաշխավորված և սերտիֆիկացված պահեստամասերի կիրառման ապահովում [4],
- ավտոտրանսպորտային միջոցների նորոգման համար երաշխավորված և սերտիֆիկացված պահեստամասերի ներկրմամբ զբաղվող ընկերությունների լիցենզավորման համար անհրաժեշտ որակյալ փորձագիտական մասնա-

գիտական խմբերի ձևավորում և հստակ սահմանված գործառույթների իրականացում,

➤ ավտոտրանսպորտային միջոցների համար նախատեսված (երաշխավորված) անվադողերի (անվազույզերի) օգտագործման, դրանց վազքի հաշվառման ապահովում,

➤ ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական ռեսուրսի (պաշարի) նորմատիվ պահանջների կիրառման ապահովում,

➤ տրանսպորտային միջոցների՝ ըստ նշանակության և փոխադրումների բնույթի օգտագործում, փոխադրումներին ներկայացվող պահանջների կատարում,

➤ ավտոտրանսպորտային միջոցների կառուցվածքային փոփոխությունների, հարմարադասման և կահավորման սահմանված պահանջների կատարման ապահովումը,

➤ ավտոտրանսպորտային միջոցները վարողի որակավորմանը, մասնագիտական ուսուցմանը, վերաորակավորմանը, երթևեկության անվտանգության հրահանգավորմանը ներկայացվող պահանջների կատարման ապահովում [4,5],

➤ տրանսպորտային միջոցները շահագործողի կողմից՝ ինժեներատեխնիկական և տեխնիկական սպասարկումներ ու նորոգումներ իրականացնող անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացման պահանջների կատարման ապահովում,

➤ ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջների կատարման ապահովում (ճանապարհային երթևեկության կազմակերպում),

➤ տրանսպորտային միջոցները վարողի աշխատանքի և հանգստի ռեժիմի պահանջների կատարման ապահովում,

➤ տրանսպորտային միջոցների շահագործման արագությունների նորմավորման գիտականորեն հիմնավորված մեթոդաբանության մշակում և դրա հիման վրա իրատեսական չվացուցակների կազմում,

➤ բնական սեղմված (հեղուկ) գազով (այլ վառելիքով) տրանսպորտային միջոցների վերասարքավորման դեպքում անվտանգության պահանջների կատարման ապահովում,

➤ տրանսպորտային միջոցների պահեստամասերի, վառելիքաքսուքային նյութերի, ավտոդողերի՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության հավատարմագրման (սերտիֆիկացման) գործընթացի ներդրման կազմակերպում,

➤ տրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման ապահովման հետ կապված ապահովագրական գործընթացի պարտադիր կազմակերպում (հատկապես ուղևորափոխադրումների բնագավառում):

Հարկ է նշել, որ ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման ապահովումը բարդ, բազմաբնույթ և բազմատարր միջոցառումների համալիր է, որի բոլոր բաղադրամասերի պահանջների կատարումը մշտական բնույթ պետք է կրի, և որևէ բաղադրամասին ներկայացվող պահանջների չկատարումը կամ ոչ լիարժեք կատարումը հավասարազոր կլինի ավտոտրանսպորտային միջոցի անվտանգ շահագործման պահանջների չկատարմանը:

Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը. անվտանգ, արդյունավետ, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող ավտոտրանսպորտային ենթակառուցվածքների և ծառայությունների մշակման միջոցով ավտոտրանսպորտային համակարգի համաչափ և երկրի կայուն զարգացման համար առավել օպտիմալ ավտոտրանսպորտային փոխադրումների կառուցվածքի ձևավորումն է և միջազգային ստանդարտներին համապատասխանող տրանսպորտային ծառայությունների մատուցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <https://www.armstat.am/am/>
2. **Чибухчян С.С., Авагян М.К., Чибухчян Г.С.** Классификация основных факторов, влияющих на эксплуатационные показатели автомобилей // Вестн. НПУА: Механика, машиноведение, машиностроение. - 2017.-№2.- С.78-86.
3. <https://armeniasputnik.am/armenia/20190430/18354754/janapahrtransportayinpataharneri-tivn-avelacele.html>.
4. **Кузьмин Н.А.** Процессы и закономерности изменения технического состояния автомобилей в эксплуатации. - Нижн. Новгоорд: Изд-во Нижегород. гос.ун-та, 2002.- 142 с.
5. World transport Policy & Practice. [Электронный ресурс].URL:
6. <http://www.ecologica.co.uk/worldtransport.htm>.

Ս.Ս. ՉԻԲՈՒՄՉԻԱՆ

ПРОБЛЕМЫ И ОСОБЕННОСТИ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОЙ ЭКСПЛУАТАЦИИ АВТОТРАНСПОРТНЫХ СРЕДСТВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Представлена роль автомобильного транспорта в развитии экономики Республики Армения. Приведены вопросы безопасности и надежности транспортных услуг, показаны пути решения безопасной эксплуатации.

Ключевые слова: транспортная система, экономика, автомобильный транспорт, безопасная и надежная эксплуатация.

S.S. CHIBUKHCHYAN

**PROBLEMS AND PECULIARITIES OF ENSURING THE SAFE
OPERATION OF MOTOR VEHICLES IN REPUBLIC OF ARMENIA**

The importance of road transport in the development of the economy of Republic of Armenia is presented. The issues on the safe and reliable transportation services are introduced. Ways to solve the mentioned problems are presented.

Keywords: transport system, economy, automobile transport, safe and reliable operation.

ՀՏԴ 656:621.113

Գ.Ս. ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մայրաքաղաքի հասարակական տրանսպորտը կարևոր դեր է խաղում ինչպես բնակչության և տնտեսության տարբեր ճյուղերի տրանսպորտային սպասարկման, այնպես էլ ռազմավարական առումով՝ հաշվի առնելով ՀՀ մայրաքաղաքի աշխարհաքաղաքական դիրքը տարածաշրջանում: Տրանսպորտային միջոցների հուսալիության բարձրացումը կարևոր նշանակություն ունի տրանսպորտի անվտանգ բնականոն աշխատանքի և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման տեսանկյունից:

Առանցքային բաներ. տրանսպորտ, տրանսպորտային սպասարկում, հուսալիություն, շահագործում:

Ներածություն: Տրանսպորտը կարևոր ռազմավարական նշանակություն ունի հանրապետության և հատկապես մայրաքաղաքի համար՝ ապահովելով մայրաքաղաքի բնակչության և բոլոր այցելուների տրանսպորտային որակյալ սպասարկումը, կենսական կարևոր նշանակություն ունեցող բոլոր օղակների արդյունավետ կապը:

Տրանսպորտի հստակ գործունեությունից և հուսալիությունից էապես կախված է տնտեսության բոլոր ճյուղերի և մարդկային գործունեության ոլորտների աշխատանքի անընդհատությունը, պարբերականությունն ու արդյունավետ կազմակերպումը: Հասարակական ուղևորատար տրանսպորտն այն ոլորտն է, որի հետ առնչվում է գրեթե յուրաքանչյուր քաղաքացի: Տարիներ շարունակ Երևան քաղաքն ունեցել է տրանսպորտային համակարգի հիմնախնդիրներ, որոնց բարելավումը և վերահսկումն օրվա հրամայական է դարձել: